

Բողոքի դիմումի ընթացքին ձեր իրաւունքները

«Չամապատասխան ազդ» ստանալու իրաւունք

Դուք իրաւունք ունիք ստանալու գրաւոր ազդ, որ գրուած է պարզ, յստակ եւ ոչ թեքնիք լեզուով: Ազդը պէտք է տրամադրուի ձեր նախընտրած լեզուով եւ ձեր լիազօր ներկայացուցիչին (եթէ ունիք այդպիսին) նախընտրած լեզուով:

Ձեր ընտրած ձեւով տեղեկութիւններ ստանալու իրաւունք

Դուք իրաւունք ունիք տեղեկութիւն ստանալու նամակատան միջոցով, ե-նամակով, կամ ձեր ընտրած այլ ձեւով:

Շրջանային կեդրոնի առաջարկած որոշումին կամ գործողութեան դէմ բողոքի դիմում ներկայագնելու իրաւունք

Դուք իրաւունք ունիք բողոքի դիմում ներկայացնելու, եթէ չհամաձայնիք շրջանային կեդրոնին տուած որոշումի մը կամ գործողութեան մը հետ: Ձեր բողոքի դիմումը պէտք է ներկայացուի որոշումին կամ գործողութեան ազդը ստանալէն ետք 60 օրուան ընթացքին:

Ձեր ներկայ ծառայութիւնները պահելու իրաւունք

Բողոքի դիմումի ընթացքին, դուք իրաւունք ունիք շարունակելու ձեր իրաւասու ըլլալու կարգավիճակը կամ պահելու ձեր ստացած ծառայութիւնները: Այս մէկը «aid paid pending» կը կոչուի: Ձեր իրաւասու ըլլալու կարգավիճակը կամ ձեր ծառայութիւնները պահելու համար, ձեր բողոքի դիմումը DDS-ին կողմէ պէտք է ստացուի կամ նամակատան կողմէ կնքուի ձեր Գործողութեան մասին ազդը ստանալէն ետք 30 օրուան ընթացքին, եւ նախքան գործողութեան տեղի ունենալը:

Ձեր արձանագրութիւնները ձեռք ձգելու իրաւունք

Դուք իրաւունք ունիք ձեռք ձգելու շրջանային կեդրոնին մէջ ձեզի վերաբերող արձանագրութիւնները: Այդ կը նշանակէ, որ դուք կրնաք նայիլ ձեր շրջանային կեդրոնի արձանագրութիւններուն: Դուք կրնաք նաեւ ձեր արձանագրութիւններուն պատճէնը ունենալ: Շրջանային կեդրոնները կրնան ձեզմէ գումար պահանջել պատճէններուն համար: Եթէ դուք չէք կրնար վճարել արձանագրութիւններուն համար, տեղեակ պահեցէ՛ք շրջանային կեդրոնը եւ հարցուցէք, թէ ինչպէս կրնաք արձանագրութիւնները անվճար ստանալ: Դուք պէտք է ձեր արձանագրութիւնները ձեռք ձգէք ձեր պահանջէն ետք 3 աշխատանքային օրուան ընթացքին:

Բողոքի դիմումի գործընթացին մէջ ձեր մասնակցութիւնը որոշելու իրաւունք

Դուք կրնաք ընտրել թէ բողոքի դիմումի գործընթացին ո՞ր մասերը կ'ուզէք օգտագործել: Ձեր ընտրանքներն են՝ ոչ պաշտօնական հանդիպում, միջնորդութիւն, կամ լսում: Դուք կրնաք ընտրել անոնցմէ մէկը կամ բոլոր բաժիները օգտագործել: Կրնաք նաեւ ընտրել, թէ ինչպէս կ'ուզէք մասնակցիլ անպաշտօն հանդիպումին, միջնորդութեան, կամ լսումին. հեռաձայնով, վիտէոյով, կամ անձամբ: Դուք կրնաք ձեր բողոքի դիմումը պահանջը որեւէ ատեն փոխել եւ օգտագործել այս ձեւերէն մէկը կամ բոլորը:

Յարմար ժամ եւ վայր ընտրելու իրաւունք

Դուք իրաւունք ունիք ընտրելու յարմար ժամ եւ վայր ձեր ոչ պաշտօնական հանդիպումին, միջնորդութեան, կամ լսումին համար:

Օգնութեան կամ աջակցութեան իրաւունք

Դուք իրաւունք ունիք ունենալու ձեզի օգնող կամ աջակցող անձ մը: Ան կրնայ ըլլալ փաստաբան մը կամ այլ անձ մը: Այդ անձը կրնայ ձեր լիազօր ներկայացուցիչը, բարեկամը, կամ ընտանիքի անդամը ըլլալ: Եթէ դուք համաձայնիք, ձեր լիազօր ներկայացուցիչը ձեր բողոքի դիմումին վերաբերեալ տեղեկութիւններ պիտի ստանայ:

Դուք կրնաք փաստաբանէ մը, կամ այլ անձէ մը խնդրել, որ ձեզի օգտակար դառնայ ձեր դիմումի գործընթացին մէջ: Ձեր փաստաբանը կրնայ դիմումի որեւէ բաժինին մասնակցիլ: Դուք շրջանային կեդրոնը նախապէս պետք է տեղեակ պահէք եթէ ձեր փաստաբանը պիտի մասնակցի ոչ պաշտօնական հանդիպումին, միջնորդութեան, կամ լսումին:

Յաւելեալ ժամանակ պահանջելու իրաւունք

Եթէ դուք յաւելեալ ժամանակի կարիքը ունիք, կրնաք ատիկա պահանջել: Այս մէկը շարունակութիւն կը կոչուի: Շարունակութիւնը կրնայ երկարաձգել ձեր բողոքի դիմումը լուծելու ժամանակը, եւ պետք է պահանջուի նախքան լսումի թուականը:

Երբ առաջին անգամ շարունակութիւն պահանջէք, պատճառ տալու պետք չունիք: Եթէ յաւելեալ շարունակութիւններ պահանջէք, պետք է պատճառ տաք ձեր պահանջին համար (այս մէկը «յարմար պատճառ» կը կոչուի):

Տարբեր միջնորդ մը կամ տարբեր լսումի պաշտօնեայ մը պահանջելու իրաւունք

Դուք կրնաք պահանջել այլ միջնորդ մը կամ լսումի պաշտօնեայ մը եթէ կը կարծէք, որ անոնք արդար չեն կրնար ըլլար: Պետք է այդ մէկը կատարէք միջնորդութենէն կամ լսումէն առաջ եւ ձեր պահանջին համար պատճառ տաք:

Բողոքի դիմումին մասնակցելու իրաւունք

Դուք իրաւունք ունիք լսումի բոլոր բաժիններուն մասնակցելու:

Իրաւունք ունիք որոշելու, եթէ լսումը հանրութեան համար բաց պիտի ըլլայ:

Լսումները հանրութեան համար բաց են: Եթէ դուք հանրութեան ներկայութիւնը չէք ուզեր, պետք է լսումի պաշտօնեային տեղեակ պահէք, որ փակ լսում կ'ուզէք: Այս մէկը կրնաք գրաւոր կատարել նախքան լսումը, կամ գրաւոր կամ բերանացի` նախքան լսումի սկիզբը:

Անաչառ լսումի իրաւունք

Դուք իրաւունք ունիք ազատ եւ բացայայտ ձեռով խօսելու ձեր լսումին ընթացքին: Լսումի պաշտօնեան պետք է օգնէ ձեզի եւ շրջանային կեդրոնին փաստերը ներկայացնելու:

Թարգմանիչ ունենալու իրաւունք

Եթէ ձեր նախընտրած լեզուն անգլերէնը չէ, դուք իրաւունք ունիք ունենալու թարգմանիչ մը, որ արդիւնաւետ, ճշգրիտ եւ չեզոք կերպով կրնայ մեկնաբանել: Կրնաք թարգմանիչ մը պահանջել ձեր դիմումի պահանջի ձեւաթուղթին վրայ: Թարգմանիչը ձեզի կը տրամադրուի ձեր բողոքի դիմումին բոլոր բաժիններուն ընթացքին:

Լսումի պաշտօնեային տեղեկութիւններ տրամադրելու իրաւունք

Դուք լսումի պաշտօնեային կրնաք ձեր դիմումին աջակցող տեղեկութիւններ ներկայացնել: Այս տեղեկութիւնները փաստ կը կոչուին: Դուք եւ այլ մարդիկ կրնաք որոշել բանաւոր ձեւով տեղեկութիւններ լսումի պաշտօնեային փոխանցել: Այս մարդիկը վկաներ կը կոչուին: Կրնաք նաեւ լսումի պաշտօնեային գրաւոր փաստաթուղթեր տրամադրել:

Շրջանային կեդրոնի դիրքորոշումի յայտարարութիւնը եւ փաստերը պետք է ձեր նախընտրած լեզուով ըլլան, կամ ձեր լիազօր ներկայացուցիչին (եթէ կայ այդպիսին) նախընտրած լեզուով: Եթէ շրջանային կեդրոնը այս փաստաթուղթերուն թարգմանուած տարբերակը չի կրնար տրամադրել, ձեզի տեղեկ կը պահէ, թուղթերը անգլերէն լեզուով կու տայ եւ կը պահանջէ շարունակութիւն՝ փաստաթուղթերը թարգմանելու իր ճիգերը ցոյց տալով: Դուք պետք է այս տեղեկութիւնները ստանաք ձեր լսումի թուականէն առաջ՝ առնուազն 2 աշխատանքային օրուան ընթացքին:

Շրջանային կեդրոնի վկաներուն հարցումներ ուղղելու իրաւունք

Շրջանային կեդրոնը կրնայ ունենալ վկաներ, որոնք լսումի ընթացքին վկայութիւններ կու տան: Դուք իրաւունք ունիք շրջանային կեդրոնի վկաներուն հարցումներ ուղղելու: